«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ մասի 1-ին կետի «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» բառերը փոխարինել «Քաղաքաշինական Ծրագրերի Փորձագիտական Կենտրոն» բառերով:

2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

- «Քաղաքաշինական Ծրագրերի Փորձագիտական Կենտրոն» բաց բաժնետիրական ընկերություն
- ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ГРАДОСТРОИТЕЛЬНЫХ ПРОГРАММ»
- OPEN JOINT STOCK COMPANY «EXPERTISE CENTER FOR URBAN DEVELOPMENT PROGRAMS»

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

- «ՔԾՓԿ» ԲԲԸ
- ՕԱՕ «ԷՑԳՊ»
- OJSC «ECUDP»

Ընկերության կանոնադրության մեջ «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ բառակապակցության փոխարեն ընթերցել «Քաղաքաշինական Ծրագրերի Փորձագիտական Կենտրոն» ԲԲԸ:

4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ըստ հաստատված ցանկի քաղաքաշինական փաստաթղթերի պետական փորձաքննության անցկացում

2. քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության հանրապետական և միջազգային փորձի ուսումնասիրում, ուսումնասիրության արդյունքների հիման վրա ոլորտի հետագա զարգացման և կատարելագործման համար համապատասխան առաջարկությունների մշակում
3. քաղաքաշինության բնագավառի գնագոյացման ոլորտում ստեղծված իրավիճակի և միջազգային փորձի ուսումնասիրության, ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունների հիման վրա ոլորտի հետագա զարգացման և կատարելագործման համար համապատասխան նորմատիվային առաջարկությունների և օրենսդրական ակտերի նախագծերի մշակում
4. կապակցությունների, լցանյութերի և բետոնների որակի հսկման փորձարկման աշխատանքների իրականացում
5. շենքերի կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազզնության և անձնագրավորման աշխատանքների իրականացում, տվյալների միասնական բանկի ստեղծում և վարում
6. քաղաքաշինության բնագավառի հիմնական խնդիրների լուծմանը վերաբերող տեղեկատվության հավաքագրում, դրանց ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների մշակում, քաղաքաշինության բնագավառին վերաբերվող միջազգային առաջավոր փորձի տեղեկագրերի հրապարակում:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» Բաց Բաժնետիրական Ընկերության 24.01.2005 թ. գրանցված կանոնադրության անբաժանելի բաղկացուցիչ մասը:

ք. Երևան 2014թ.

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

բաց բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը և կազմված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող և սույն կանոնադրության 16 կետով սահմանված թվով բաժնետոմսերի:

Ընկերությունը հանդիսանում է «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության /գրանցման թիվ 264.120.01488, գրանցման օրը 14.07.1995թ., վկայական 01Ա 014614/ իրավահաջորդը և ստեղծվել է «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 27.12.2004թ.-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման մասին որոշման ընդունման արդյունքում:

«Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության 1994թ. մայիսի 6-ի որոշմամբ հաստատված պետական ձեռնարկությունների գույքի մասնակի անհատույց սեփականաշնորհման և այդ ձեռնարկությունների վերակազմավորելու կարգի համաձայն՝ «Հայկական սեյսմակայուն շինարարության գիտահետազոտական ինստիտուտ» պետական ձեռնարկության վերակազմավորման հիման վրա, որի վրա ՀՀ Նախարարների Խորհրդի 1991թ-ի մարտի 11-ի թիվ 199 որոշման համաձայն դրված է սեյսմակայուն շինարարության հանրապետական կենտրոնի պարտականությունները և նշված ոլորտում կատարվող գիտահետազոտական աշխատանքների կոորդինացումն ու իրականացումը:

2. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

– «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» Բաց Բաժնետիրական Ընկերություն

– ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО "АРМЯНСКИЙ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ СЕЙСМОСТОЙКОГО СТРОИТЕЛЬСТВА И ЗАЩИТЫ СООРУЖЕНИЙ"

– OPEN JOINT STOCK COMPANY «ARMENIAN RESEARCH INSTITUTE OF EARTHQUAKE ENGINEERING & PROTECTION OF CONSTRUCTIONS»

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

– «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲԸ

– ОАО "АрмНИИСС и ЗС"

– OJSC «ARIEE & PC»:

3. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 375014, Ա. Աճառոնյանի 3:

4. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- Շինարարական բնագավառի նորմատիվա-իրավանգչական փաստաթղթերի (շինարարական նորմեր, ստանդարտներ, ձեռնարկներ, հանձնարարականներ և այլն) մշակում, վերանայում, կատարելագործում և փորձաքննություն.

- Շենքերի և ինժեներական կառույցների սեյսմակայունության ստուգման գնահատման տեսական և փորձարարական նոր մեթոդների մշակում.

- Շենքերի և կառուցվածքների սեյսմակայունության և հուսալիության բարձրացման նոր կոնստրուկտորա-տեխնոլոգիական համակարգերի նախագծում, վերականգնման և ուժեղացման նոր արդյունավետ կոնստրուկտիվ լուծումների մշակում և իրականացում.

- ՀՀ-ում սեյսմակայուն շինարարության ուղղությամբ տարվող գիտահետազոտական աշխատանքների իրականացում և կոորդինացում.

- Տեսական հետազոտությունների իրականացում շինարարական մեխանիկայից, բետոնի և երկաթբետոնի տեսությունից, շինարարական ֆիզիկայից, նյութագիտությունից.

- Շահագործման մեջ գտնվող շենքերի, ինժեներական կառույցների, կենսաապահովման և ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների (ԱԷԿ, քիմիական և մետալուրգիական գործարաններ, կամուրջներ, ամբարտակներ, օդանավակայաններ և այլն) տեխնիկական վիճակի

պարբերական հետազննում, վկայագրավորում (անձնագրավորում), նրանց անվտանգ և անխափան շահագործումն ապահովող միջոցառումների մշակում և իրականացում.

- Շենքերի, կառուցվածքների, այդ թվում՝ տրանսպորտային կառույցների բնապայման փորձարկումների իրականացում, նրանց սեյսմակայունությունն ու հուսալիությունը բարձրացնող տարբեր համակարգերի մշակում և կատարելագործում.

- Գիտական հետազոտությունների իրականացում բետոնների, շինարարական շաղախների, պոլիմերային շինանյութերի, հրակայուն բետոնների ուղղությամբ, նոր շինանյութերի ստացման տեխնոլոգիաների մշակում.

- Հիմքերի և հիմնատակերի նոր կոնստրուկտիվ լուծումների, բնահողերի ամրության և կայունության կանխագուշակման էքսպերիմենտալ մեթոդների, շինհրապարակների սեյսմիկության նվազեցման ձևերի մշակում.

- Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների իրականացում՝ շինարարական օբյեկտներն ու նրանց հարակից տարածքները սողանքներից, սելավներից, ջրակալումներից ու ջրածածկումներից պահպանելու նպատակով, սողանքավտանգ տարածքների վրա մոնիտորինգի իրականացում.

- Կապակցությունների և լցանյութերի որակի հսկման փորձարկման աշխատանքների իրականացում.

- ՀՀ-ում արտադրվող և ներմուծվող շինանյութերի, շինվածքների և կոնստրուկցիաների փորձարկման աշխատանքների իրականացում, ինչպես նաև դրանց փորձաքննության և հավատարմագրման (սերտիֆիկացիայի) իրականացում.

- Միջնորդային ծառայություն (նախագծային և շինարարական ինժեներինգ).

- Շինարարական տեխնիկական հսկողություն.

- Շինարարական բնագավառի ինժեներա-տեխնիկական և գծային անձնակազմի որակավորման բարձրացում և վերապատրաստում, գիտական կադրերի պատրաստում (ասպիրանտուրայի միջոցով).

- Կոմպյուտերային դասընթացների կազմակերպում, կոմպյուտերային դիզայն և մարգագառողջական գործունեություն:

5. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքներով, և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած այլ տնտեսական գործունեություն:

6. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում՝, ապրանքային և սպասարկման նշաններ: Ընկերությունն 'որ անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է սույն կանոնադրությանը չհակասող գործունեություն, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով. Ընկերության պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման:

8. Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:

9. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

10. Ընկերության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշը շահույթն է:

11. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

12. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար:

13. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

14. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն Ընկերության պարտավորությունների համար: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը

որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

15. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ կամ մասնակցել նրանցում, ինչպես նաև մասնակցություն ունենալ այլ կազմակերպություններում:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Ընկերության կանոնադրական կապիտալը 1433815 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ է, որը կազմում է 1433815 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր տասնհինգ) հատ տեղաբաշխված սովորական բաժնետոմս (այսուհետև՝ բաժնետոմս), որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1 (մեկ) ՀՀ դրամ: Ընկերության հայտարարված սովորական անվանական բաժնետոմսերի քանակը կազմում է 5,000,000 (հինգ միլիոն) հատ բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ մեկ ՀՀ դրամ է:

Սույն կանոնադրության հաստատման պահին, Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 80 տոկոսը (թվով 1147052 հատ) պատկանում է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, իսկ մնացած 20 տոկոսը (թվով 286763 հատ)՝ մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

17. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

18. Կանոնադրական կապիտալի փոփոխման հարցով ժողովի գումարման ծանուցումը պետք է պարունակի՝

ա) կանոնադրական կապիտալի փոփոխման շարժառիթները, եղանակն ու չափը,

բ) կանոնադրության փոփոխման նախագիծը՝ կապված կանոնադրական կապիտալի փոփոխման հետ,

գ) բաժնետոմսերի քանակը և դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը, որը պետք է ստացվի կանոնադրական կապիտալի փոփոխման արդյունքում:

19. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Ընդ որում, Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն իր կողմից հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում: Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանվում են այդ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ:

20. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

ա) լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում.

բ) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ դրանց ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

21. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո օրենքով սահմանված կամ դրանով չարգելված կարգով կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը:

22. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

23. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել նաև իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

24. Կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝

ա) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

բ) բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

25. Կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է:

26. Ընկերությունը, կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում, գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, ընկերությունից պահանջել

պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև դրա հետ կապված վնասների հատուցում:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

27. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը ու պարտատոմսերը անվանական են և ոչ փաստաթղթային ձևի:

28. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքները պետք է լինեն միևնույնը:

29. Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

30. Ընկերությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է համախմբել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի մեկ նոր բաժնետոմսի, կամ բաժանել դրանք, որի արդյունքում ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի երկու կամ ավելի բաժնետոմսերի: Նշված երկու դեպքերում սույն կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

31. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, արժեթղթերը, մտավոր սեփականությունը, դրամական միջոցները:

32. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով չարգելված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի մեծությունը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերությանը պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում՝ դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն:

Ընկերությունը կարող է թողարկել՝

ա) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.

բ) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.

գ) առանց ապահովման պարտատոմսեր, որի՝ թողարկումը թույլատրվում է Ընկերության գրանցումից առնվազն երեք տարի հետո և պայմանով, որ սահմանված կարգով հաստատված լինեն Ընկերության առնվազն երկու տարեկան հաշվեկշիռներ:

Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:

33. Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում, Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն Ընկերության բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

34. Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ Ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, տարեկան տոկոսները պարտատոմսի տիրոջը կարող են չվճարվել, որը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսերում:

Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերի մարման դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

IV ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Ընկերության յուրաքանչյուր սովորական անվանական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

36. Սովորական անվանական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

ա) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում. Ընկերությանը դիմելուց հետո 5-օրյա ժամկետում ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

զ) ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

է) հանդես գալ առաջարկություններով ժողովում.

ը) ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.

ժա) Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր.

ժբ) օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը.

ժգ) ունենալ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

37. Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5 տոկոս կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը կարող են պահանջել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում՝ աուդիտորի կողմից: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

38. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը:

V ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

39. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեքղերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

VI ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

40. Բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

41. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին: Շահութաբաժինները վճարվում են դրամով:

42. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից:

43. Բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության խորհրդի կողմից: Տարեկան

շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

44. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սկսվում է Ընկերության յուրաքանչյուր ֆինանսական տարվա հունիսի 1-ից և ավարտվում՝ շահութաբաժինների վճարման պարտավորության կատարմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի կողմից՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

VII ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

45. Ընկերությունը պարտավոր է Ընկերության բաժնետերերի ռեեստրի վարումը և պահպանումը հանձնել Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային: Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի հետ ռեեստրի վարման պայմանագիրը ստորագրում է ընկերության գործադիր տնօրենը:

46. Բաժնետերերը, ինչպես նաև ընկերության այլ արժեթղթերի սեփականատերերը պարտավոր են ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները ժամանակին չներկայացնելու դեպքում, ընկերությունը և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիան պատասխանատվություն չեն կրում բաժնետիրոջը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջը պատճառված վնասի համար:

47. Ռեեստրի վարումը, դրանում գրառումների կատարումը և արժեթղթերի սեփականատերերի անձնական հաշիվների սպասարկումը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի կողմից հաստատված արժեթղթերի շուկայի կանոնագրքի և Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների համաձայն:

VIII ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

48. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փետրվար ամսից մինչև հունիս ամիսը ընկած ժամանակահատվածում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

49. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ Ժողովի) իրավասություններն են՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (մասնակցող ձայների 3/4-ով),

բ) Ընկերության վերակազմակերպումը (մասնակցող ձայների 3/4-ով).

գ) Ընկերության լուծարումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 2/3-ից).

դ) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը (մասնակցող ձայների 3/4-ով).

ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը (մասնակցող ձայների 3/4-ով).

զ) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 2/3-ից).

ը) ժողովի վարման կարգի հաստատումը.

թ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժգ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան

շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժե) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք է ներկայացնում.

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժէ) շահագրգռվածության առկայության դեպքում, գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժը) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ժթ) բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.

ի) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

50. Կանոնադրության 49 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին կամ գործադիր մարմնին:

51. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

52. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

53. Ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

54. Ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ եթե վերջիններս այդ ընթացքում այդպիսի պահանջ ներկայացնեն: Այդ փաստաթղթերի պատճենահանման ծախսերը պետք է կատարվեն այդպիսի պահանջ ներկայացնող բաժնետերերի հաշվին:

55. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Տարեկան ժողովը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67 հոդվածի 1-ին կետի «ժբ» ենթակետով սահմանված դեպքում հրավիրված ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկությամբ:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները ընկերության կողմից ընդունելը ավարտելու պահից առնվազն 30 օր շուտ:

56. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

Խորհրդակցական ձայնի իրավունքով ժողովին կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող ընկերության խորհրդի, վերստուգող հանձնաժողովի և գործադիր մարմնի անդամները, ինչպես նաև Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առնչվում է զումարվող ժողովի նյութերում):

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա՝

Եթե Ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:

57. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ ծանուցումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակելու միջոցով: Ժողովի գումարման մասին ծանուցման հրապարակումը և հաղորդումը պետք է կատարվի ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:

58. Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք որոշում են՝

ա) ժողովի գումարման տարին, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) ժողովի օրակարգը.

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

59. Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

60. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

61. Ժողովի որոշմամբ Ընկերությունում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող՝ երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Ընկերության խորհրդի անդամները, վերստուգող հանձնաժողովի անդամները, Ընկերության գլխավոր տնօրենը կամ Ընկերության տնօրինության, վարչության անդամները, ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի քվորումը, ապահովում է քվեարկության հանձնված կարգը, քվեարկության մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն և Ընկերության, առխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

62. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

63. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

64. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

65. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության դեպքի, որի ժամանակ կիրառվում է գումարային քվեարկության սկզբունքը:

66. Ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով:

IX ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

67. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

68. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն կանոնադրության 60 կետով սահմանված դեպքերի,

գ) ժողովների օրակարգի հաստատումը,

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան,

ե) սույն կանոնադրության 49 կետի բ) ենթակետով նախատեսված հարցի ներկայացումը ժողովների քննարկմանը,

զ) սույն կանոնադրության 49 կետի ժդ), ժզ) և ժթ) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը,

է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

թ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գլխավոր տնօրենի, տնօրենի տեղակալների և ստորաբաժանումների ղեկավարների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները,

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,

ժդ) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժէ) Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, դուստր կազմակերպությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի հանդիսանում,

ժը) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնադրամների ստեղծումը,

ժբ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VIII և IX գլուխներում նախատեսված դեպքերում գործարքների կնքումը.

ի) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իա) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իբ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իգ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

69. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող 3 անդամից պակաս լինել և ոչ ավել 7 անդամից:

70. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերաբերում է նաև անվանատերերին:

71. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

72. Խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող խորհրդի անդամը նախագահում է ժողովներում, բացառությամբ ժողովի վարման կարգով նախատեսված դեպքերի:

73. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, վերստուգող հանձնաժողովի անդամի, գործադիր մարմնի, ընկերության առդիտն իրականացնող անձի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերի պահանջով: Խորհրդի նիստերը խորհրդի նախագահի նախաձեռնությամբ գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս եռամսյակը մեկ անգամ:

74. Խորհրդի նիստերում նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են խորհրդի անդամների կեսը և ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ այլ կարգ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի կամ քվեարկության իրավունքի փոխանցում չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով:

75. Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է խորհրդի քանակական կազմի կեսից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

76. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության միանձնյա գործադիր մարմնի՝ գործադիր տնօրենի կողմից:

77. Ընկերության գործադիր տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և Ընկերության և նրա հետ կնքված պայմանագրով: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

78. Ընկերության գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ընկերության անունից.

բ) ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.

զ) բանկերում բացում է ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային [illegible] կարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

բ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

79. Ընկերության անվանմամբ կնիք կնիքը գտնվում է Ընկերության գործադիր տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է միայն գործադիր տնօրենին:

80. Խորհրդի անդամները, Ընկերության գործադիր տնօրենը, տնօրինության անդամները իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով: Նրանք պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար:

X ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

81. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկումն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը, որի անդամներին ընտրում է ժողովը: Վերստուգող հանձնաժողովը բաղկացած է երեք անդամից: Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված գործունակ ֆիզիկական անձինք:

82. Վերստուգող հանձնաժողովը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը: Նա իրավունք ունի իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգել ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Ընդ որում, վերստուգող հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ստուգումներ կարող է իրականացնել տարեկան ոչ ավելի քան երկու անգամ: Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է տրամադրվեն ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

83. Տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշիվը հրապարակելուց առաջ, դրանց հավաստիությունը վերստուգելու համար, Ընկերությունը պարտավոր է հրավիրել աուդիտորի, որը գույքային շահերով կապված չէ ընկերության կամ նրա բաժնետերերի հետ: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը:

IX. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

84. Ընկերության գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի, հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունը պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվող տեղեկությունների համար:

85. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պահպանել՝

ա) Ընկերության պետական գրանցման վկայականը, հաստատված կանոնադրությունը, նրանում կատարված լրացումները, փոփոխությունները, նոր խմբագրությամբ կանոնադրությունը, Ընկերության ստեղծման մասին որոշումը և ստեղծման մասին պայմանագիրը.

բ) Ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ ընկերության գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերը.

գ) ժողովի և կառավարման մյուս մարմինների կողմից հաստատված Ընկերության ներքին փաստաթղթերը.

դ) Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները.

ե) Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի թողարկման ազդագրերը.

զ) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը.

է) պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվապահական, հանձնային և վիճակագրական հաշվետվության փաստաթղթերը.

ը) Ընկերության բաժնետերերի ժողովի, խորհրդի, վերստուգող հանձնաժողովի և հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրությունները, քվեաթերթիկները.

բ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի, աուդիտն իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման ֆինանսական վերահսկում իրականացնող մարմինների եզրակացությունները.

ժ) Ընկերության կնքած պայմանագրերը.

ժա) արժեթղթերի գրանցման հայտարարագրերը.

ժբ) Ընկերության փոխկապակցված անձանց (նրանց պատկանող բաժնետոմսերի քանակի նշումով), ինչպես նաև Ընկերության նշանակալից և խոշոր բաժնետերերի ցուցակները.

ժգ) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները.

ժդ) օրենքով և իրավական ակտերով, Ընկերության ներքին փաստաթղթերով, ժողովի, խորհրդի և կառավարման այլ մարմինների որոշումներով նախատեսված այլ փաստաթղթեր:

86. Ընկերությունը բաժնետերերի պահանջով պարտավոր է նրանց հնարավորություն ընձեռել ծանոթանալու նախորդ կետում նշված փաստաթղթերին և հինգօրյա ժամկետում նրանց տրամադրել փաստաթղթերի պատճենը, բացառությամբ գաղտնի տեղեկությունների և ընկերության գործադիր մարմնի հրամանների և հրահանգների: Գաղտնի տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը՝ տնօրենի ներկայացմամբ:

87. Ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճենը:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

88. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

Ընկերության լուծարման հիմքերն են՝

ա) Ընկերության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ժամկետի լրանալը կամ այն նպատակին հասնելը, հանուն որի Ընկերությունը ստեղծվել էր, կամ դատարանի կողմից ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը.

բ) ժողովում Ընկերության առանց իրավահաջորդի լուծարման մասին ընդունված որոշումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի 2/3-ից).

գ) դատարանի կողմից Ընկերության գրանցումն անվավեր ճանաչելը, կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ.

դ) օրենքով սահմանված այլ հիմքերը:

Ընկերության ժողովը նախքան լուծարման մասին որոշումն ընդունելը, հաստատում է խորհրդի կողմից ներկայացված Ընկերության ամփոփիչ հաշվեկշիռը և ընկերության լուծարման նախագիծը:

Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարային հանձնաժողովը: Քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը իրավունք ունեն ընդգրկվել լուծարման հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից:

XI ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

89. Ուժը կորցրած ճանաչել «Սեյսմակայուն Շինարարության և Կառուցվածքների Պահպանման Հայկական Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը, նրանում՝ մինչև սույն կանոնադրության ուժի մեջ մտնելը կատարված բոլոր փոփոխություններով հանդերձ:

90. Սույն կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած վեցամսյա ժամկետում Ընկերության խորհուրդը և գործադիր տնօրենը հաստատում կամ սահմանված կարգով հաստատման են ներկայացնում Ընկերության կառավարմանն առնչվող կանոնակարգերը, կանոնները և ներքին այլ փաստաթղթերը:

91. Սույն կանոնադրությունը պետական գրանցման է ենթակա՝ այն ընդունելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում: Սույն կանոնադրությունը գրանցելու և պետական գրանցման ներկայացնելու պարտականությունը դրվում է ժողովի նախագահի վրա: Սույն կանոնադրությունը այլ (երրորդ) անձանց համար ուժի մեջ է մտնում՝ դրա պետական գրանցման պահից:

Բնագրի հետ
Թիրակ Ե

5216
24 01 2005.